

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**31 մայիսի 2021թ.
ք. Երևան**

N 107-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ԶԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐԸ ԳԵՐԱՉԱՆՑՈՂ ՄԱԿԵՐԵՍՈՎ «ՏԻԳՐԱՆ
ԱՐՉԱՔԱՆՑՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ. ՈՒԺԸ՝ ՄԱՐԴՆ Է»
ԳՐԱՌՄԱՄԲ ԿԱՄ ՆՇՎԱԾ ԳՐԱՌՄԱՄԲ ԵՎ ՏԻԳՐԱՆ ԱՐՉԱՔԱՆՑՅԱՆԻ
ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՊԱՍՏԱՌԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ԱՍՈՑԱՑՎՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 21-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության վերջին նախադասության համաձայն. «Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով քարոզչական պաստառը կարող է փակցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես բաշխված արտաքին գովազդային վահանակում»:

Նույն հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն.

«Նախընտրական քարոզչության անցկացման ժամանակահատվածում վերացման են ենթակա նաև կենտրոնական կամ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված՝ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով պաստառները, տպագիր և այլ նյութերը այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, և որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները»:

Հիմք ընդունելով նշված իրավանորմերի պահանջները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ իրականացրած վարչական վարույթի շրջանակներում կատարած շրջայցերի և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից ստացված փաստաթղթերի ուսումնասիրմամբ պարզել է, որ առկա են մի շարք արտաքին գովազդային

վահանակներ, որոնց վրա տեղադրված են 5 քառակուսի մետրը գերազանցող Տիգրան Արզաքանցյանի լուսանկարը և «ՏԻԳՐԱՆ ԱՐԶԱՔԱՆՑՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ. ՈՒԺԸ՝ ՄԱՐԴՆ Է» գրառումը պարունակող պաստառներ, որոնց էքսիզները ներկայացվել են «Նորդլայն» ՍՊԸ-ի, «ԻՄԻՋ Մ.Գ.» ՍՊԸ-ի, «Յունիքորն գրուպ» ՓԲԸ-ի, որպես «Հավելված թիվ 119/21»՝ «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի, «ԱԴՎ Դիզայն» ՍՊԸ-ի, «Վ.Վ. Արտ Դիզայն» ՍՊԸ-ի, «ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲԸ-ի կողմից և հաստատվել (Երևանի քաղաքապետի 25.05.2021թ. N01/52-630974 գրությամբ ներկայացված ցանկի 26-րդ, 27-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ և 35-րդ կետեր՝ կից էքսիզներով):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքացի Տիգրան Արզաքանցյանը Հայաստանի դեմոկրատական կուսակցության ընտրական ցուցակով գրանցված է որպես Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների պատգամավորի թեկնածու, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նրա լուսանկարը և/կամ «ՏԻԳՐԱՆ ԱՐԶԱՔԱՆՑՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ. ՈՒԺԸ՝ ՄԱՐԴՆ Է» գրառումը պարունակող պաստառներն իրենց բովանդակությամբ ասոցացվում են նախընտրական քարոզչության հետ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգիրք 21-րդ հոդվածի 9-րդ մասի, 51-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Քաղաքացի Տիգրան Արզաքանցյանի լուսանկարով կամ «ՏԻԳՐԱՆ ԱՐԶԱՔԱՆՑՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ. ՈՒԺԸ՝ ՄԱՐԴՆ Է» գրառմամբ պաստառները ճանաչել Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախընտրական քարոզչության հետ ասոցացվող:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. Մուկուչյան